



140. ՀԱՐՍՆՈՒԿ ՄՈՒԿՆ Է ՄԵՌԻ

Մուկն ու ճետ կը կարգվին:

Մուկն ղթունդիր կը վառե, ճետ գելնա տանիք, չետ ղիկա տեսնա՝ ի՛նչ, մուկն չընկի թունդիր, կը թերըրթըփի¹:

Ճնճուղ կը հարցու.

— Ճե՛տ, չորի՞ն իս թերըրթըփի:

— Թա՛ռ, թա՛ռ, մուկն չընկի թունդիր:

Ճետ կըսե ճնճուղն՝ ճնճուղ կը թեթըփի², ճնճուղ կըսե ծառին՝ ծառ կը ճըղկոտրի³, ծառ կըսե քարին՝ քար կը գլորի, քար կըսե չաղրրին՝ չաղրուր կը ղղղորի, չաղրուր կըսե աղջկան՝ աղջիկ կը մորմըրի⁴, աղջիկ կըսե մամուն՝ մամ կը սգվորի, գիլա՛ն ու գիլա՛ն, ինչ է ի՛նչ,— հարսնուկ մուկն է մեռի:

¹ Փետրաթափվել (Մ. Կ.):

² Թեթափ լինել (Մ. Կ.):

³ Ճղակոտոր լինել (Մ. Կ.):

⁴ Մորմորալով լաց լինել (Մ. Կ.):

